


ԱՐԴՅՈՒՆ ԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

*ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

ԱՐԴՅՈՒՆ ԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆ ԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող արդյունաբերական քաղաքականությունը պետք է հիմնվի արտահանման առավել լայն կարողություններ ունեցող ձեռնարկությունների գործունեության համակողմանի աջակցության արդյունավետության բարձրացման վրա¹:

Կարծում եմք՝ ՀՀ Կառավարությունը պետք է վարի արդյունաբերական արտադրանքի արտահանումը խթանող ակտիվ քաղաքականություն: Արտահանումը հարկերից և մաքսատուրքից ազատելը դեռևս բավարար չէ. անհրաժեշտ է արտահանվող արտադրանքի թողարկման համար ներկրվող հումքի, նյութերի և հանգույցների ներկրումը նույնպես ազատել հարկերից և տուրքերից: Պետք է հարկերից և տուրքերից ազատել նաև տեխնոլոգիաների և մեքենասարքավորումների ներկրումը: Այս համատեքստում նշենք, որ ներկայումս Կառավարության կողմից մշակվել է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» նախագիծ²: Նախագծի ընդունումը կհանգեցնի արտահանում իրականացնող կազմակերպություններին տրամադրվող աջակցությանը՝ նոր գործիքի մշակմամբ, և արտահանմանը նպաստող ինստիտուտների զարգացմանը: Բանն այն է, որ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը նախաձեռնել է ՀՀ մասնակցությամբ «Արտահանման ֆինանսավորման

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարություն, 2011 թվական:

² Տե՛ս www.parliament.am/ նախագծեր

ապահովագրական կազմակերպություն» (ԱՖԱԿ) ՓԲԸ ստեղծում, որով և պայմանավորված է վերոնշյալ օրենքում լրացումներ կատարելու անհրաժեշտությունը:

Հայաստանի Հանրապետությունում արտահանման ֆինանսավորման ապահովագրական կազմակերպության ձևավորումը համահունչ է մեր երկրի որդեգրած՝ արտահանմանն ուղղված արդյունաբերական ռազմավարությանը, ինչպես նաև պայմանավորված է միջազգային շուկաներ մուտք գործող ընկերություններին աջակցելու նոր գործիքների մշակման և Կառավարության՝ նշված ռազմավարության իրագործմանը նպաստելու անհրաժեշտությամբ: Հայաստանում արտահանման ֆինանսավորման նոր գործիքների և մոտեցումների կիրառումը պահանջում է արտահանման վարկավորման ապահովագրության ներդրում: Որպես արտահանում իրականացնող ընկերությունների աջակցման նոր գործիք՝ ԱՖԱԿ-ի հիմնական գործառույթն արտահանման վարկերի, երաշխիքների և ֆինանսական վնասների դասերով (ներառյալ՝ այդ դասերի ներքո ընդգրկված ենթադասերով) ապահովագրության տրամադրումն է:

Հանրապետության արդյունաբերության ներկա վիճակին բնորոշ են մի շարք խնդիրներ, որոնք հիմնականում ընդհանուր են հանրապետության գրեթե բոլոր արդյունաբերական ճյուղերի համար: Դրանցից են.

- արդյունաբերության ոլորտում՝ միկրոմակարդակում հետազոտությունների և վերլուծությունների պակասը, տեղեկատվական բազայի բացակայությունը,
- ինչպես ընդհանուր արդյունաբերության, այնպես էլ ոլորտային զարգացման ծրագրերի բացակայությունը,
- ընկերությունների ռազմավարական զարգացման ծրագրերի բացակայությունը,
- ցածր մրցունակությունը,
- ներքին շուկայի ոչ լիարժեք պաշտպանվածությունը,
- ներմուծված հումքի վրա արտադրության հիմնվածությունը,
- Հայաստանում արտադրվող հումքային արտադրատեսակների՝ վերջնական արտադրանքի վերածման շղթայի բացակայությունը,
- տրանսպորտի բարձր գները,
- հարկային և մաքսային վարչարարության խնդիրները,
- ձեռնարկությունների կողմից (հատկապես՝ փոքր և միջին) մարքեթինգի իրականացման նվազ կարողությունները,
- ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխան կառավարման համակարգերի և կառավարիչների բացակայությունը,
- ստանդարտացման և սերտիֆիկացման համակարգերի կայացման ցածր մակարդակը,
- պետական աջակցության մեխանիզմների և գործիքների սահմանափակությունը,
- արտադրություն-գիտություն-կրթություն համագործակցությունը և հետադարձ թույլ կապը,
- հայկական արտադրատեսակների բրենդի բացակայությունը,
- վարկային միջոցների անմատչելիությունը:

Հայաստանն արդյունաբերական ուղղվածությամբ երկիր դարձնելու քաղաքականությունը պահանջում է ժամանակակից մոդելների, նորարարական

արդյունքի կիրառման համակարգերի ներդրում արդի մրցունակ տեխնոլոգիաների օգնությամբ, ինչպես նաև մարդկային կապիտալի շարունակական զարգացման ապահովմամբ: Հարկ է ձևավորել արտահանման ուղղվածություն ունեցող զարգացած արդյունաբերական համակարգ, որը միջազգային չափորոշիչներին համապատասխանող ապրանքների թողարկման, նոր արտաքին շուկաների ընդլայնման և աշխատատեղերի ստեղծման միջոցով բնակչության կենսամակարդակի բարձրացման հիմք կդառնա: Այդ նպատակով պետք է.

- ստեղծել համապատասխան միջավայր՝ տարեցտարի բարձրացնելով ՀՆԱ կառուցվածքում արդյունաբերության մասնաբաժինը,
- ձևավորել արտահանման ուղղվածությամբ արդյունաբերական համակարգ,
- միջազգային շուկայում ապահովել մրցունակ ընկերությունների թվի աճ,
- ներգրավել օտարերկրյա առաջադեմ ընկերությունների,
- գիտելիքահենք տնտեսության ստեղծման համար ձևավորել արտադրական գիտատեխնոլոգիական և մարդկային կապիտալի ներուժ,
- համաշխարհային տնտեսությանը Հայաստանի տնտեսության ինտեգրում:

Հայաստանի Հանրապետությունը ոչ մետաղական հանքային պաշարների քանակով ու բազմազանությամբ աշխարհում առաջատար դիրքերում է: Այստեղ հանդիպում են աշխարհում հայտնի գրեթե բոլոր տեսակի հանքանյութային ապարները: Հատուկ արժեք ու նշանակություն ունեն հրաբխային ծագմամբ լեռնային ապարները, որոնցից կարևորվում են թեթև ապարները՝ տուֆ, պեռլիտ, պեմզա, ցեոլիտ, հրաբխային խարամ և այլն: Տարատեսակ բազալտների, գրանիտների, նեֆելինային սիենիտների, մարմարների ծավալները հսկայական են³: Հայկական ԽՍՀ-ն ոչ մետաղական հանքանյութի արդյունահանման և վերամշակման ոլորտում առաջատար տեղ էր զբաղեցնում միութենական հանրապետությունների շարքում (օրական միջինը 40-50 վազոն՝ 1 մլն մ³ վերամշակված ոչ մետաղական հումք էր արտահանվում)³:

Արտահանման ընդլայնումը տնտեսության զարգացման ու հզորացման կարևոր պայման է. այս ոլորտը կարող է դառնալ մեր արտահանման հայեցակարգի առանցքային ուղղություններից մեկը, կապահովվի արտարժույթի ներհոսք, ինչպես նաև կստեղծվեն աշխատատեղեր, լուկոմոտիվի դեր կստանձնի այլ ճյուղերի համար: Ոչ մետաղական հանքանյութ արդյունահանող և վերամշակող ձեռնարկությունների վերագործարկումը կնպաստի Հայաստանի Հանրապետության տարածքային համաչափ զարգացմանը, ինչի արդյունքում մարզերում կլուծվեն բազմաթիվ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ:

Այս ոլորտին բնորոշ է անթափոն արտադրություն, քանի որ համապատասխան ներդրումների դեպքում կողմնակի արտադրանքը երբեմն ավելի մեծ տնտեսական արդյունք է ապահովում. օրինակ՝ բազալտե ձուլածո սալիկները, խողովակները, լինելով թթվակայուն, հիմնակայուն և մաշվածքակայուն, կարևոր բնապահպանական նշանակություն կունենան՝ ծառայելով որպես պոչամբարներ ու պոչուղիներ՝ թափոնների համար: Այժմ Հայաստանում

³ Տե՛ս Ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ոլորտի զարգացման հայեցակարգի նախագիծ, 2009 թ.:

բուռն զարգացում է ապրում լեռնամետալուրգիան, և ֆլոտացիոն գործընթացից հետո առաջացած թափոնների հեռացումը, որոնք քիմիապես խիստ ակտիվ են և աբրազիվ, մեծ խնդիր է համարվում այս ոլորտում: Քաջարանից թափոնները հեռացնում են մինչև 28 կմ: Միայն ծուլածո սալիկների և խողովակների օգտագործումը կարող է երկարածել այդ պոչուղիների անվնաս շահագործումը: Բացի այդ, կարելի է նաև արտադրել դեկորատիվ մակերես ունեցող սալիկներ, բարդ կառուցվածքների գեղարվեստական բազալտե իրեր՝ տարբեր գույների և ֆակտուրաների, որոնք կարող են փոխարինել գրանիտե և մարմարե բնական քարերին: Այս մշակումը մենաշնորհ է, պատկանում է «Քար և սիլիկատներ» ինստիտուտին և կարող է ստեղծել մեծ ավելացված արժեք:

Հարկ ենք համարում թվարկել ոչ մետաղական հանքանյութերից պատրաստվող, մեծ պահանջարկ ունեցող մի շարք ապրանքատեսակներ՝ փրփրապակի, փքված պեռլիտ, ֆիլտր փոշիներ, պեռլիտաթելքավոր սալեր, ագրոպեռլիտ, պեռլիտասիլիկատային սալեր, բազալտե ծուլածո սալիկներ ու խողովակներ, դեկորատիվ բազալտ, անընդհատ մանրաթելերի պեռլիտ և այլն:

Վերը նշված ապրանքների արտադրությունը և արտահանումը մեր ՀՆԱ-ն կավելացնեն մոտ 2.8 մլրդ ԱՄՆ դոլարով, ինչը էականորեն կբարելավի առևտրային հաշվեկշիռը, այս ոլորտում կստեղծվեն ավելի քան 8200 աշխատատեղեր: Համեմատության համար նշենք, որ ամերիկյան «CORNING» ֆիրման տարեկան արտադրում ու մոտ 30 երկրների վաճառում է 5 մլրդ դոլարի ջերմամեկուսիչ շինանյութեր (FOAMGLAS)⁴՝ 1մ³-ը 1200-1300 դոլար միջինացված գնով (Հայաստանում արտադրելու դեպքում՝ 300-400 դոլար)⁴:

Ուսումնասիրությունների արդյունքում առաջարկվում է.

1. Ընտրել այս ոլորտի առավել շահութաբեր և տնտեսության համար առաջնային արտադրատեսակները, պահպանված գործարանները դասակարգել՝ առանձնացնելով դրանցից 5-6-ը, որոնք կապահովեն ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման միջազգային նոր տեխնոլոգիաների ներմուծումը Հայաստան: Կազմակերպել մի շարք առաջին արտադրատեսակների արտադրությունը՝ բավարարելով ինչպես ներքին շուկայի պահանջարկը, այնպես էլ ձգտելով լիարժեք մրցակցության միջազգային շուկայում:

2. Պետական աջակցություն ցուցաբերել ընտրված ձեռնարկությունների վերագործարկման նպատակով բանկերի համար ընդունելի գործարարության ծրագրերի մշակմանը:

3. Աջակցել համապատասխան շահագրգիռ խմբերին, միջազգային ֆինանսական կազմակերպություններին և առանձին ներդրողներին նշված ծրագրերի ներկայացման հարցում:

4. Ապահովել ընտրված ձեռնարկություններում պետական բաժնեմասի առկայությունը:

5. Շահագրգիռ խմբերի և համապատասխան գործարանների սեփականատերերի հետ քննարկել ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման կարտելի ստեղծման հնարավորությունը՝ որպես տարբերակ դիտարկելով նաև պետության մասնակցությունը:

⁴ St u World Mineral Production, 2005-2009:

6. Արտոնությունների տրամադրում (ներմուծված սարքավորումների համար ԱԱՀ վճարման ժամկետի հետաձգում և այլն):

Հանրապետության արդյունաբերական ճյուղերի զարգացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել համալիր միջոցառումներ, որոնք պետք է ընդգրկեն՝

ՀՀ արդյունաբերության զարգացման ծրագիր: Հայաստանում բացակայում է արդյունաբերության՝ ըստ ճյուղերի զարգացման ծրագիրը: Նման ծրագիր մշակելու համար պետք է վերլուծել արդյունաբերության ճյուղերը կազմակերպությունների մակարդակով՝ իրավիճակը լիարժեք պատկերացնելու համար: Միկրովերլուծություններ իրականացնելու համար ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում հարկ է ստեղծել կազմակերպությունների տվյալների բազա:

Յուրաքանչյուր ճյուղի զարգացման ներուժը և միտումներն առավել ճիշտ ներկայացնելու համար պետք է կազմակերպվեն քննարկումներ համապատասխան ոլորտի գիտնականների, հետազոտողների և արտադրության ներկայացուցիչների մասնակցությամբ՝ նպատակ ունենալով նախանշելու կարևոր ուղղությունները Հայաստանում:

Առ ընդ Դի (R&D) և գիտություն-արտադրություն կապը: Հայաստանն այսօր ձգտում է կառուցել գիտելիքահենք տնտեսություն, ուստի նորարարությանն օժանդակող ենթակառուցվածքի ստեղծումն ու զարգացումը պետք է լինեն հիմնական մարտահրավերներ: Միջազգային ասպարեզում Հայաստանի մրցունակությունը մեծապես պայմանավորված է նորարարական ապրանքներ ստեղծելու և օտարերկրյա շուկաներ արտահանելու կարողությամբ: Այս տեսանկյունից առաջնային է նորարարական տնտեսության ձևավորման խնդրի լուծումը, որի համար երկիրն ունի բավարար գիտական ներուժ:

Կարևորվում են նաև արդիականացումը նորաստեղծական հիմքի վրա և բարձր արտադրողականությամբ արտադրությունների ստեղծումը՝ խրախուսելով տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ներդրումը, այդ թվում՝ օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ: Դա կնպաստի ինչպես աշխատանքի արտադրողականության մակարդակի, այնպես էլ ապրանքների որակի և մրցունակության բարձրացմանը, հետևաբար՝ կազմակերպության վարկանիշի աճին:

Ֆինանսական ռեսուրսների մատչելիության ապահովում: Ձեռնարկությունների գործունեությանը բնորոշ են երկու փոխկապակցված հատկանիշներ.

- ա) ներդրումներից, արտահանումից և R&D-ից եկամուտները ստացվում են երկարաժամկետում,
- բ) եկամուտների չափն անորոշ է, քանի որ գործառնությունները ռիսկեր են պարունակում:

Արտաքին ֆինանսավորման բացակայության դեպքում կազմակերպությունները ստիպված են ամբողջ ռիսկն իրենց վրա վերցնել, հետևաբար՝ տնտեսությունում բավարար ներդրումներ, արտահանում և R&D չի կատարվում:

Այս խնդիրների լուծումը պահանջում է ֆիսկալ խթանների և ֆինանսավորման այլընտրանքային ձևերի կիրառում: Ֆիսկալ խթաններից են լրահատկացումները և հարկային արտոնությունները:

Արտադրության զարգացման համար հաճախ պահանջվում են երկարաժամկետ վարկային միջոցներ ոչ բարձր տոկոսադրույքներով: Արդյունաբերության գերակա ճյուղերը որոշելուց հետո բանկային համակարգի հետ պետք է քննարկվի դրանց մատչելի ֆինանսական միջոցներ տրամադրելու հարցը: Արդյունաբերական կազմակերպությունների տեխնոլոգիական գործընթացների առանձնահատկություններից ելնելով՝ հաճախ ոչ բարձր տոկոսադրույքով երկարաժամկետ վարկային միջոցների անհրաժեշտություն է առաջանում, որը չի կարող բավարարվել հանրապետության ներկայիս բանկային համակարգի առաջարկած պայմաններով: Նպատակահարմար է բանկային համակարգի հետ համատեղ մշակել համապատասխան պայմաններ, որոնք առևտրային բանկերին հնարավորություն կտան հեռանկարային կազմակերպություններին զարգացման ծրագրերի շրջանակներում տրամադրելու մատչելի տոկոսադրույքով երկարաժամկետ վարկեր:

Փոքր և միջին կազմակերպություններին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու նպատակով արդեն իսկ կիրառվում են վարկային երաշխավորությունների տրամադրման, վարկային տոկոսադրույքի մասնակի լրահատկացման, սկսնակների ֆինանսավորման և սեփական կապիտալի ֆինանսավորման գործիքներ: Ըստ այդմ՝ Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի ներքո 2009 թ. ստեղծվել է «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ն: Նախատեսվում է կապիտալի ֆինանսավորման մեխանիզմների ներդրման ծրագրի հաստատումը, որի նպատակն այնպիսի մեխանիզմների կիրառումն է, որոնք, հիմնվելով շուկայական գործոնների և սկզբունքների վրա, կապահովեն կապիտալի ներհոսքը իրական հատված, մասնավորապես՝ փոքր և միջին գործարարության ոլորտ: Այս ծրագրում կներկայացվեն Հայաստանի փոքր և միջին գործարարության սուբյեկտներ հանդիսացող ընկերությունների կապիտալում ուղղակի ներդրումների ավելացման հիմնախնդիրները, կառաջարկվեն այդ բնագավառի զարգացման կիրառական տարբերակներ և համապատասխան օրենսդրական փոփոխություններ:

Բացի այդ, աշխատանքներ կկատարվեն նաև լիզինգի և ֆակտորինգի՝ որպես արդյունաբերական կազմակերպությունների ֆինանսավորման գործիքների զարգացման ուղղությամբ: Թեև այս գործիքներն արդեն որոշ չափով օգտագործվում են, սակայն դեռևս լայն տարածում չունեն, որը կարելի է բացատրել դրանց վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության բացակայությամբ, ֆինանսական հատվածում մասնագետների ոչ բավարար փորձով, ինչպես նաև կանոնակարգող դաշտում առկա խնդիրներով: Այս առումով, նախատեսվում է ՀՀ կենտրոնական բանկի, ֆինանսական և արդյունաբերական կազմակերպությունների հետ քննարկել լիզինգի և ֆակտորինգի շուկաների զարգացման քայլերը:

Ներդրումային միջավայրի բարելավում: Ներդրումային միջավայրի գրավչության մակարդակը ՀՀ-ում ներկայումս ցածր է: Այս խնդիրը համալիր լուծում է պահանջում: Ներդրումային միջավայրի բարելավումը կախված է ոչ միայն գործող օրենսդրությունից, այլև գործարարության զարգացմանը նպաստող պայմանների ձևավորումից:

Օտարերկրյա ուղղակի ներդրումները պետք է դառնան մեծածավալ տեխնոլոգիաների ներմուծման աղբյուր, ինչը կնպաստի մրցակցային դաշտի բարելավմանը՝ ի հաշիվ աճող միջազգային հատվածի:

Նորաստեղծական, գիտելիքահենք տնտեսություն կառուցելու համար կարևորվում են օտարերկրյա ուղղակի ներդրումների բազմազանեցումն ու ենթակառուցվածքային ծրագրերի իրականացումը:

Օտարերկրյա և տեղական ներդրումների հոսքերի ռիսկերը կրճատելու ուղղությամբ պետք է շարունակվեն բարեփոխումները «Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրի «Գերազանցության կենտրոն» համագաղթային նախագիծ» հայեցակարգի շրջանակներում: Մասնավորապես, արդեն հիմնականում վերացվում են հարկային և մաքսային համակարգերի, ինչպես նաև այլ պետական ստուգող ու վերահսկող կառույցների և տնտեսավարող սուբյեկտների փոխհարաբերություններում առկա վարչարարական խոչընդոտներն ու բացասական դրսևորումները, պարզեցվում են գործարարության գրանցման և փակման գործընթացները, կրճատվում են դրանց ժամկետները, հստակեցվում ու միավորվում են ֆինանսական և այլ պետական կառավարման մարմիններին ներկայացվող հաշվետվությունները, ներդրվում է էլեկտրոնային համակարգ, նվազեցվում են արտահանման և ներմուծման համար պահանջվող փաստաթղթերի ժամկետները, ձևավորվում է կորպորատիվ կառավարման մշակույթ, ապահովվում են գործարարների և ներդրումների պատշաճ իրավական պաշտպանության կայուն և կանխատեսելի պայմաններ, հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության բարձրացում:

Անդրազգային կորպորացիաների ներգրավում: Գիտակցելով բարձր տեխնոլոգիական արտադրությունների զարգացման անհրաժեշտությունը և այս ոլորտում անդրազգային կորպորացիաների դերը, լուրջ քայլեր պետք է արվեն նման ներդրումներ կատարելու համար երկիրը գրավիչ դարձնելու ուղղությամբ, ինչը հնարավոր է բարձրակարգ մարդկային կապիտալի, գիտահետազոտական աշխատուժի մատչելիության, ներդրումային բարենպաստ միջավայրի ապահովման միջոցով: Փոքր ներքին շուկայի ռազմավարական պաշարների սակավության, սակայն, մյուս կողմից՝ կրթական ավանդույթներ ունեցող երկրի համար անդրազգային կորպորացիաներ ներգրավելու հիմնական պայմաններից են լայնածավալ կրթական նախաձեռնությունների շնորհիվ բարձրակարգ աշխատուժի ապահովումը, կայուն և արդյունավետ ազգային նորարարական համակարգի և ենթակառուցվածքի ստեղծումը, որը հնարավոր է իրականացնել՝ հիմնվելով պետության, մասնավոր հատվածի և գիտակրթական համակարգի միջև սերտ և արդյունավետ համագործակցության վրա:

Պետական մարմինների կողմից աջակցություն արտահանման կառուցվածքի բազմազանեցման, դրա ծավալների ավելացման, արդյունաբերական կազմակերպությունների արտաքին համագործակցության, հումքի ու նյութերի ներմուծման և արտադրանքի արտահանման հարցերում: Տնտեսության վրա արտաքին շուկայի անբարենպաստ ազդեցությունը մեղմելու, սպառման շուկաներն ընդլայնելու և տեղական արտադրողի համար արտաքին շուկաների հասանելիությունն ապահովելու նպատակով հարկ է աջակցել ընկերություններին՝ բազմազանեցնելու արտաքին շուկայում պահանջարկ վայելող արտադրատեսակները: Պետական աջակցությունը կարող է իրականացվել հետևյալ ուղղություններով.

- Համաժողովների և աշխատանքային հանդիպումների կազմակերպում այլ երկրների համապատասխան ոլորտների մասնագետների,

արդյունաբերական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, որտեղ տեղական կազմակերպությունները հնարավորություն կունենան մասնագիտական հարցերի վերաբերյալ կարծիքներ փոխանակելու և ընդլայնելու գործարար կապերի ցանցը:

- Ձեռնարկությունների ներկայացուցիչների աշխատանքային այցերի կազմակերպում այլ երկրներ, որոնց ընթացքում նրանք հնարավորություն կունենան ոչ միայն ծանոթանալու այդ երկրների կազմակերպությունների գործունեությանը, այլ նաև մասնակցելու դասընթացների տեղի առաջատար ուսումնական հաստատություններում, ինչը կնպաստի մասնագիտական կարողությունների զարգացմանը: Այս հարցում կարևոր դեր կարող են խաղալ սփյուռքի ներկայացուցիչները:
- Արդյունաբերական կազմակերպությունների ղեկավարների ընդգրկում պետական պատվիրակություններում, միջկառավարական հանձնաժողովներին նրանց մասնակցության ապահովում:
- Հանդիպումների ընթացքում պատվիրակությունների կողմից արտահանման ուղղվածություն ունեցող հեռանկարային ճյուղերի և կազմակերպությունների արտադրանքի ներկայացում:
- Արտասահմանում << դեսպանատների առևտրային ներկայացուցչության ինստիտուտի դերի բարձրացում:

Ի ԷՔԱԱԷ Ի ԱԵԵՕԻ ԵՂ

Հաճաճքսեճ Էճ ՕճճճԻ Է „Ի ԷԵՑԻ ԿԵԻ Ի Ի ԷԵԵ” ԱՄԿՕ,
ճԻ ԷՑԻ Ց ԿԵԻ Ի Ի Է-ճճԷԷ Ի ճԷ, Ի ՑԻ ՕճճճԻ Ց

*Ի ՑԻ ճԷճԻ Ս Ի Ի ԱՍՑճԻ ԷՅ ԿՕ ՕճԷՑԷճԻ Ի ճԵ Ի ՑԻ Ի ՍՑԷճԻ Ի Է
Ի Ի ԷՑՕԷԷԷ ճ ԸճճԻ ՕճԷԷԷճ ԱՑԻ ճԻ ԷՅ.-* Ա ճՕճՕճճ ՑճճճԻ ճՕՑԷ-
ճճՐՕճճ ԳԻ Ի ՑԻ ճՍ Ի Ի ԱՍՑճԻ ԷՅ ԿՕ ՕճԷՑԷճԻ Ի ճԵ Ի ՑԻ Ի ՍՑԷճԻ-
Ի Ի Է Ի Ի ԷՑՕԷԷԷ ճ ԸճճԻ ՕճԷԷԷճ ԱՑԻ ճԻ ԷՅ, ճ ՕճԷճճ ՕճԷՕՍճճ
ճԵՕճՕճՕճճ ճճԷՕԻ Ցճ Ի ճԻ ճՕճԷԷԷ-ճճԷԷՕ Ի Ի ԷճՑԻ ՍՕ ԷճԷԻ Ի ճճ-
Ի ՍՕ, ճԻ ՑԻ Ի ճԻ Ի ճԵ ԳԷՅ ճճԻ ՑճՑճԷՕճճ. ԷԻ Ի Ի ԷճԷճԻ ԳՅ ճԵճՕճԻ ճ
Ի ճՑԻ Ի ՑԷՅՕԷԷ ճճԻ ճԷՕճճ ճ ճՕճՕճՐ, -ՕԻ ճՍ Ի ճճճԻ ճ-ԷՕՍ Ի ճՕ-
ՍճճՕճԷճԻ Էճ ՑճՑճԷՕճճ Ի ՑԻ Ի ՍՑԷճԻ Ի Ի ճԻ ճճԷՕԻ Ցճ ճՕՑճԻ Ս.

MIKAYEL MELKUMYAN

Head of the Chair of „Microeconomics” at ASUE,
Doctor in Economics, Professor

*The Main Issues of Increasing the Industrial Policy
Efficiency in the Republic of Armenia.-* The article considers the
problems of increasing the efficiency of the implementation of
the industrial policy in the Republic of Armenia, as well as the
current situation in non-metallic minerals sector. A system of
complex measures is introduced in the article to ensure the
implementation of development of the industrial sector of the
country.

